

## Արձանագրություն թիվ 1

2019թ.-ի սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի V<sup>ր</sup> դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին 27 ծնող, դասղեկ Գ. Դավթյանը, ուսուցիչներ Գ. Ղազարյանը և Ա. Դալլարյանը:

### ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման կազմակերպում: Աշակերտ - ծնող - դպրոց օղակի առողջ աշխատանքի կարևորությունը աշակերտների կրթության և դաստիարակության հարցում:
3. Ընթացիկ հարցեր /հերթապահություն, կարգապահություն/

1. Լսեցին Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Գ. Դավթյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն: Նախագահ առաջարկվեց Սյուզաննա Գինոսյանը, կատարվեց քվեարկություն և միաձայն ընտրվեց նախագահ:

## Որոշեցին

5-րդ բ դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

- 1.Սյուզաննա Գինոսյան /նախագահ/
- 2.Գայանե Գալստյան /անդամ/
- 3.Հրանուշ Հարությունյան /անդամ/
- 4.Աստղիկ Հարությունյան /անդամ/
- 5.Անուշ Ոսկանյան /անդամ/

2.Լսեցին Սովորողների պարտադիր կրթության իրականացման գործընթացում անհրաժեշտ ուսումնական նյութերի ձեռքբերման հարցը: Աշակերտ -ծնող-դպրոց օղակի առողջ աշխատանքի կարևորության, աշակերտների կրթության և դաստիարակության հարցը:

Դասղեկ Գ Դավթյանը նշեց ,որ սովորողների կրթության և դաստիարակության գործընթացում շատ կարևոր է ծնողների աջակցությունը: Ծնողներին հորդորեց ձեռք բերել անհրաժեշտ տետրեր և այլ գրենական պիտույքներ:

Մայրենիկի ուսուցիչ Գ Ղազարյանը, անգլերենի ուսուցիչ Ա.Դալլաքյանը և մաթեմատիկայի ուսուցիչ Գ.Դավթյանը ներկայացրեցին առարկաների հետ կապված իրենց պահանջները:

## Որոշեցին

Սատարել մեկը մյուսին սովորողների կրթության կազմակերպման գործընթացում:

### 3. Հեղին Ըստացիկ հարցեր

Դաստեկ Գ. Դավթյանը նշեց, որ նոր ուսումնական տարում դպրոցն աշխատելու է հնգօրյա ռեծիմով. Դասերը սկսվում են ժամը 9:00-ին և ավարտվում են 14:10-ին: Դաստեկը հորդորեց ծնողներին, որ լինեն հետևողական և աշակերտները դպրոց հաճախեն պատշաճ հազնված, պայուսակներով, դասազրերով, օրագրերով և անհրաժեշտ մյուս պարագաներով:

### Որոշեցին

Աշակել դպրոցին երեխաների տարրական կրթությունից միջինին անցումը սահուն և անցնցում կազմակերպելու գործընթացում:

Ծնողական խորհրդի նախագահ՝

Քարտուղար՝

Օգոստ  
Իրվան

Սյուզաննա Գինոսյան

Գայանե Գալստյան